ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն

Սերգեյ Խաչատրյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Էվիան, Ֆրանսիայի Հանրապետություն, մարտի 13-ից 15-ը, 2018թ.

4. Հրավիրող կողմը

GAVI միջազգային դաշինք

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն GAVI պատվաստումների և պատվաստանյութերի միջազգային դաշինքի խորհրդի անդամների հերթական հանդիպմանը:

6. Քննարկված թեմաները

Նիստի ընթացքում ներկայացվեց ԳԱՎԻ-ի տարեկան հաշվետվությունը:

Եվրոպական երկրների առողջապահության նախարարությունների մասնակցությունը ընդգրկող այս հանդիպումը լավ հարթակ էր տարածաշրջանում առկա համագործակցության ընդլայնման, ինչպես նաև ընդհանուր քաղաքական ռազմավարության մշակման տեսանկյունից:

Այցի շրջանակներում աշխատանքային հանդիպումներ եղան մի շարք ԳԱՎԻ դաշինքի անդամ-պետությունների առողջապահության ղեկավարների հետ: Նրանց հետ քննարկվեցին երկրների միջև առողջապահության բնագավառում համագործակցության ընթացքը, հետագա զարգացման հեռանկարներն ու հնարավորությունները: Քննարկվեցին ՀՀ առողջապահության նախարարության և ԳԱՎԻ դաշինքի միջև համագործակցության ուղիները, ԳԱՎԻ դաշինքի կողմից հնարավոր տեխնիկական օժանդակության հարցը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

GAVI միջազգային դաշինքը լավ հնարավորություն հանդիսացավ միավորելու զարգացող երկրների և դոնոր կազմակերպությունների՝ անապահով երկրներում իմունիզացիայի մակարդակի բարձրացման և հետևաբար՝ երեխաներին կառավարելի վարակիչ հիվանդություններից պաշտպանելու նպատակով:

Նիստի ընթացքում քննարկվեցին կարևոր գործնական նշանակություն ունեցող հարցեր, որոնք ուղղված են վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը, պանդեմիկ գրիպի դեմ պայքարի ուժեղացմանը, երեխաների և դեռահասների առողջության և զարգացման ոլորտում ներդրումների իրականացմանը, ֆինանսական և այլ խնդիրների լուծմանը:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

GAVI-ի կողմից մշակվելու է նոր ռազմավարություն, զուգահեռ ներդրվելու են մեխանիզմներ, որոնք թույլ կտան ավելի արդյունավետ արձագանքելու ի հայտ եկող դեպքերին:

9. Առաջարկությունները

Առաջարկվեց հնարավորություն ստեղծել, որպեսզի Հայաստանում նույնպես ներդրվեն GAVI-ի կողմից մշակվող նոր մեխանիզմները, ինչպես նաև շարունակվի GAVI-ի աջակցությունը 2018թ.-ից հետո:

GAVI-ին կքննարկի բարձրացված հարցերը և կայացված որոշման վերաբերյալ կտեղեկացնի հերթական հանդիպման ընթացքում:

10. Գործուղվողները

Սերգեյ Խաչատրյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը

2018թ. մարտի 16